ՀՀ ՆԱԽԱԳԱՀՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Դեկտեմբերի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Հանրապետության նախագահը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին իր ափսոսանքը հայտնեց հոկտեմբերի 27-ի ողբերգական դեպքերի պատճառով փոքր-ինչ ուշացած այցի համար:

Հանդիպման նպատակն էր՝ Վեհափառ Հայրապետի հետ քննարկել Եկեղեցի-պետություն հարաբերություններին առնչվող հարցեր, որոնք կարևոր դեր ունեն երկրում բազմաթիվ ներքին խնդիրների լուծման, ինչպես նաև Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների սերտացման գործում:

Վեհափառ Հայրապետն իր մտահոգությունը հայտնեց հիշյալ դեպքերից հետո ներքաղաքական կյանքում առկա որոշ անհանգստությունների առնչությամբ՝ հայցելով Տիրոջ օգնականությունը երկիրը խաղաղության մեջ պահելու համար: Միաժամանակ Վեհափառ Հայրապետը հաջողություն մաղթեց հանրապետության նախագահին՝ հայրենի երկրի կայունության պահպանմանն ու վարկի բարձրացմանն ուղղված ջանքերում: Նորին Սրբությունը վերստին իր զորակցությունը հայտնեց հանրապետության նախագահին ու պետությանը:

Իր հերթին պրն. Քոչարյանը շեշտեց Եկեղեցու կարևոր դերն ու նրա ակտիվ մասնակցությունը երկրում բարոյա-հոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորման ասպարեզում:

Ապա Ամենայն Հայոց կաթողիկոսն ու ՀՀ նախագահն ունեցան առանձնազրույց:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ